

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #11

Նոյեմբեր 2020

Երևան, Հայաստան

■ Ներդրումների
■ Աջակցման
■ Կենսրոն



Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մանրի վերամշակում.....	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	10
R&D	14
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	15
Կոսմետիկա	17
Առողջապահություն	18
Այլ ոլորտներ	21
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	25
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	27

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մանդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Էկոլոգիապես մաքուր սննդի ռուսաստանյան արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Սվերդլովսկի շրջանի ռուսական ընկերությունը, որը մասնագիտանում է իվան-թեյի, սոճու և մայրու կոններից մուրաբայի, կեչու հյութի, մեղրի, առանց խմորիչ հացի արտադրության, մեծածախ և մանրածախ առևտրում, փնտրում է արտերկրյա գործընկերներ՝ տարածման ծառայությունների շրջանակներում համագործակցություն հաստատելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/918c96ee-e32a-4023-83c0-c70d4afb6a0d>

Ծածկագիր. BORU20201028002

Ձեռագործ շոկոլադի ուկրաինական արտադրողը տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո փնտրում է գործընկերներ

Ուկրաինայից ձեռագործ շոկոլադ արտադրողն առաջարկում է բնական բաղադրիչներից բաղկացած բնական շոկոլադ, ձեռագործ կոնֆետներ, ընկույզ-շոկոլադի սփրեդ և աղի կարամել: Արտադրողը փնտրում է տարածման համաձայնագրեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/af853e7-4dba-4245-b2c0-99eb454be6b8>

Ծածկագիր. BOUA20201012002



Օրգանական հյութի և ջեմի իսպանական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Իսպանական (բասկյան) ՓՄՁ-ն, որը մասնագիտանում է հապալասի, խնձորի և խառը օրգանական հյութերի, ինչպես նաև հապալասի մուրաբաների արտադրության մեջ, փնտրում է դիստրիբյուտորներ՝ տարածման ծառայությունների համաայնագրի ներքո իր ցանցը զարգացնելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/938577c9-3b59-4151-a3c2-3a6f0f621496>

Ծածկագիր. BOES20201021001

Բնական քաղցրացուցիչներ արտադրող չինական ընկերությունը կորպորացիա է փնտրում առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո

2008-ին հիմնադրված չինական ընկերությունն արտադրում է բնական քաղցրացուցիչներ և բուսական քաղվածքներից այլ արտադրանք: Այն ունի իր սեփական տնկարանները, բույսերի արդյունահանման առաջատար գործարաններ և ԱՄՆ-ում վաճառքի դուստր ձեռնարկություն: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր՝ ամբողջ աշխարհի դիստրիբյուտորների հետ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/70e48987-15f2-4dce-ade1-441bb70323b9>

Ծածկագիր. BOCN20201012001



Ռումինական ընկերությունը, որը մասնագիտանում է սննդաբար մեղրի բարերում, փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ

2018 թ.-ին հիմնադրված ռումինական ստարտափը, որը զբաղվում է բացառապես բնական մեղրով, տարբեր տեսակի ընկույզներով և մրգերով արտադրվող բնական և սննդային խորտկարանների արտադրությամբ, գործընկերներ է փնտրում տարածման ծառայությունների և առևտրային գործակալության համաձայնագրի շրջանակներում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2afc93a9-b1eb-45d1-858a-4f05496d25f9>

Ծածկագիր. BORO20200730001



Գործարար համագործակցության հարցումներ

Լեհական ընկերությունը ազնվամորու սերմերի կամ ազնվամորու հյութի ստացումից հետո չորացված մնացորդի արտադրողներ է փնտրում՝ մատակարարման երկարաժամկետ համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Ստորին Սիլեզիայի շրջանից լեհական ՓՄՁ-ն, որն արտադրում է կոսմետիկա և ագրոարդյունաբերության համար բարձրորակ սառը քամվածքի յուղեր, փնտրում է ազնվամորու սերմերի կամ ազնվամորու հյութի ստացումից հետո չորացված մնացորդի արտադրողներ կամ մատակարարներ: Ընկերությունը շահագրգռված է համագործակցել մատակարարման երկարաժամկետ համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/85ad1e37-6788-419b-a3c0-da02d60aa848>

Ծածկագիր. BRPL20200929001

Ռուսական ընկերությունը, որն արտադրում է գյուղանտեսական ապրանքներ և սննդամթերք, փնտրում է գործընկերներ, որոնք կաջակցեն համատեղ ձեռնարկության համաձայնագրերի ներքո ստեղծել համալիր արտադրանք՝ կերային հացահատիկը վերածելով սննդային հավելումների

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է վերամշակվող սննդամթերքի արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ համագործակցության համար. այն է՝ ստեղծել համալիր արտադրանք՝ կերային հացահատիկը վերածելով սննդային հավելումների: Գործընկերը կարտադրի վերամշակված հացահատիկից լիոֆիլիզացված և պատրաստի սնունդ: <https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7ba9cc67-bf93-4c93-a0ba-fcc5896ae213>

Ծածկագիր. BRRU20200415002

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական ընկերությունը, որը կանանց ներքնազգեստի առաջատար արտադրող է, փնտրում է ներքնազգեստի դիստրիբյուտորներ

Ներքնազգեստի արտադրության մեջ մասնագիտացած քառորդ դարյա պատմություն ունեցող լեհական ձեռնարկությունն առաջարկում է կանանց ներքնազգեստի լայն ընտրանի՝ ներառյալ կրծկալներ, կորսետներ, ծնկակապեր, վարտիքներ, գոտիներ, բողիներ և լողազգեստներ: Հսկայական փորձի և ինչպես ձեռքի, այնպես էլ արդյունաբերական արտադրության գործընթացների միաժամանակյա օգտագործման շնորհիվ արտադրանքն ունի նուրբ որակ և բարդ հարդարում: Ընկերությունը շահագրգռված է տարածման ծառայությունների ներքո և (կամ) արտադրական համաձայնագրի ներքո համագործակցությամբ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c9dbd8ed-f7ce-42d0-848f-ad63f851be98>

Ծածկագիր. BOPL20191106006

Թվային տպագրության ծառայություններ բնական մանրաթելերի վրա

Լիտվական ընկերությունը մատուցում է թվային տպագրության ծառայություններ բնական մանրաթելերի վրա, ինչպիսիք են՝ սպիտակեղենը, բամբակը, վիկկոզը և փնտրում է համագործակցություն առևտրային գործակալների և հաճախորդների հետ, որոնք արտադրական համաձայնագրերի ներքո ունեն գործվածքների վրա տպագրական ծառայությունների կարիք:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/da9ac0d8-2c51-4a5a-bf94-404422867975>


Ծածկագիր. BOLT20190521001

Հյուսված և տրիկոտաժե նեղ գործվածքներ արտադրող լեհական ՓՄՁ-ն ռազմավարական ներդրողների համար առաջարկում է արտադրական և ֆինանսական համաձայնագրեր

Տեքստիլի ոլորտում գործող լեհական ընկերությունը, որը զբաղվում է հյուսված և տրիկոտաժե նեղ գործվածքների (ժապավեններ, էլաստիկներ, ծոպեր, ցանցեր) արտադրության ոլորտում, փնտրում է արտադրական գործընկերներ՝ նրանց իրենց կարողություններն առաջարկելու համար: Ընկերությունը փնտրում է այնպիսի գործընկերներ, որոնք օգտագործում են տեքստիլ նեղ գործվածքներ այնպիսի ճյուղերի համար, ինչպիսիք են՝ կոշկեղենի արտադրությունը, կազմարարությունը, կահույքի արտադրությունը: Արտադրական և ենթապայմանագրային համաձայնագրեր են նախատեսված համագործակցելու դեպքում: Ընկերությունը նաև ռազմավարական ներդրողների է փնտրում բաժնետոմսերի մասնակի ձեռքբերման համար, ուստի նաև դիտարկվում է ֆինանսական համաձայնագիրը:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/3fbab181-bc20-4582-9bc8-488af33fb717>

Ծածկագիր. BOPL20190402003



Լեհական նորաձև պայուսակներ և աքսեսուարներ են առաջարկվում տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո

Նորաձևության պայուսակների և աքսեսուարների լեհ դիզայները և մատակարարը փնտրում է նոր առևտրային գործընկերների: Հավաքածուն բաղկացած է կատունների, շների, բուերի և ֆլամինգոների, ինչպես նաև երկրաչափական նախշերի վերարտադրումներից, կոլաժների և արվեստի հայտնի գործերի վարիացիաների հետ կապված բազում նմուշներից: Ապրանքները պատրաստված են բարձրորակ՝ հիմնականում էկոլոգիական նյութերից, ինչպիսիք են ֆետրեն և քաթանը: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, որոնք պատրաստ են այս ապրանքները տարածել ամբողջ աշխարհում: Տարածման ծառայությունների մասին համաձայնագիրն առաջարկվում է որպես համագործակցության տեսակ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/80a510b2-3703-4456-a189-0711d43a1085>

Ծածկագիր. BOPL20201028001



Գիշերազգեստի և տնային հագուստի լեհական արտադրողն իր ապրանքներն առաջարկում է տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո

Լեհական ընկերությունը զբաղվում է շքեղ գիշերազգեստների և տնային հագուստի արտադրությամբ, ձևավորմամբ և վաճառքով: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/4e387413-6fa0-48d5-9462-58864ce66ecc>

Ծածկագիր. BOPL20200929001




Բարձրակարգ ձեռագործ կաշվե իրերի արտադրողն արտասահմանում փնտրում է գործընկերներ մանրածախ առևտրի ոլորտում, որոնք ունեն բուտիկ կամ առցանց խանութ

Ֆրանսիական ՓՄՁ-ն չորս գույներով ձևավորում և արտադրում է բարձրորակ կաշվե ձեռագործ արտադրանք լիարժեք Novonappa հորթի կաշվից: ՓՄՁ-ն ստեղծել է օրիգամիի տեխնիկայով բնօրինակ կտորներ: Այն առաջարկում է փոքր իրեր, ինչպիսիք են պատյանները (հեռախոս, ակնոցներ, քարտեր և այլն) և զարդարանքի պարագաներ (մկնիկի բարձիկ, տակդիրներ և այլն), հագուստ (գոտիներ, ժապավեն փողկապներ այլն) կամ ճանապարհորդական պարագաներ (պայուսակներ այլն) Ընկերությունն առաջարկում է հարմարեցված պատյաններ Master Chef դանակի համար: ՓՄՁ-ն արտասահմանում փնտրում է գործընկերներ մանրածախ առևտրի ոլորտում, որոնք ունեն բուտիկ կամ առցանց խանութ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/9b6f92bb-14d4-4eb5-b207-8db897811923>

Ծածկագիր. BOFR20201001001



Գործարար համագործակցության հարցումներ

Ֆրանսիական ՓՄՁ-ն գործընկերներ է փնտրում բժշկական սարքի պաշտպանիչ պատյան արտադրելու համար

Ֆրանսիական ՓՄՁ-ն, որը նախագծում, մշակում և արտադրում է մատակարարման համակարգեր և նորարարական բժշկական սարքեր, փնտրում է տեքստիլ, պատյաններ կամ պայուսակներ (բացառությամբ կաշվե աշխատանքների)՝ արտադրական համաձայնագրի ներքո բժշկական սարքի պաշտպանիչ պատյան արտադրելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/5e99ee65-9ee6-465f-8e25-fc7c1d668b10>

Ծածկագիր. BRFR20201009001




Երեխաների համար փափուկ խաղային իրերի լատվիական արտադրողը մատակարարման համաձայնագրի ներքո փնտրում է համագործակցություն արհեստական կաշի և այլ տեքստիլ գործվածքներ մատակարարող ընկերությունների հետ

Լատվիական ընկերությունը մասնագիտանում է երեխաների համար փափուկ խաղային իրերի արտադրության բնագավառում. ֆորմաներ, հավաքածուներ, ճոճաթոռներ, գնդային փոսեր, ներքնակներ և այլն: Ընկերությունը շահագրգռված է ընդլայնել իր գործընկերների ցանցը՝ բացահայտելով արհեստական կաշվի և տեքստիլ գործվածքների այլ միջազգային բարձրորակ մատակարարների: Ընկերությունը պատրաստ է համագործակցել մատակարարման համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/503c9fe1-c5ee-4256-ad94-8c9b957fc965>

Ծածկագիր. BRLV20200429001



Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Մանկական խաղահրապարակների բարձրորակ ամուր փայտից պատրաստված բաց տարածքների համար նախատեսված արտադրանք արտադրող լիտվական սղոցարանը փնտրում է առևտրային միջնորդներ և առաջարկում է արտադրական ծառայություններ

Փշատերև փայտանյութի վերամշակման ոլորտում գործող լիտվական ընկերությունը երեխաների խաղահրապարակների համար արտադրում է բարձրորակ պինդ փայտի արտաքին արտադրանք: Ընկերությունն առաջարկում է իր արտադրանքը և փնտրում է առևտրի միջնորդներ՝ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով: Այն նաև առաջարկում է արտադրական ծառայությունների մատուցման համաձայնագիր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/fa196b0a-2564-4860-a9de-4ec843828ca3>

Ծածկագիր. BOLT2020111001

Ավտոլվացման համար նախատեսված առանց կոնտակտի ինքնասպասարկող ծառայության կետ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է գործակալներ

Լեհական ընկերությունը, որը մասնագիտանում է ինքնասպասարկման համար նախատեսված առանց կոնտակտի ավտոլվացման կետերի արտադրության ոլորտում, փնտրում է երկարատև միջազգային համագործակցություն՝ արտադրական կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո: Ընկերությունն իրականացնում է անհատական կարիքները բավարարող լվացող մեքենաներ, որոնք մշակվել են հաճախորդի կարիքներին համապատասխան, առաքվում և հավաքվում են անհրաժեշտ տեղանքում, ինչպես նաև ունեն ծառայության և սպասարկման ապահովում, այդ իսկ պատճառով հաճախորդին մատուցվում է համապարփակ ծառայություն:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2aed8c79-e00b-4a0c-a629-3441f6dee41b>

Ծածկագիր. BOPL20191106014

Փայտե ամուր կահույքի, դռների, պատուհանների և այլ փայտե իրերի արտադրողը Կոսովոյից, առաջարկում է արտադրական և ենթապայմանագրային ծառայություններ

Մուտքի դռների, սենյակների դռների, պատուհանների, խոհանոցների, նախասրահների, ննջասենյակների, ինչպես նաև տների, հյուրանոցների, ռեստորանների և այլ ներքին հարդարանքների արտադրողը Կոսովոյից, փնտրում է օտարերկրյա գործընկերներ և առաջարկում է արտադրական և ենթապայմանագրային ծառայություններ:



Լեհական ընկերությունը գործակալներ է փնտրում առանց շրջանակի և շարժական այլումինե դռների համար

Շինարարական ոլորտի լեհական ՓՄՁ-ն մասնագիտացած է դռների արտադրության և տեղադրման ոլորտում: Ընկերության առանց շրջանակի և շարժական այլումինե դռները բարձր դիմադրողականություն ունեն, ինչպես նաև դիմացկուն են խոնավության հանդեպ, ապահովում են աղմուկի նվազեցում և ջերմամեկուսացում, համապատասխանում են ինտերիերի դիզայնի միտումներին: Ընկերությունն առաջարկում է համագործակցություն առևտրային գործակալության պայմանագրի շրջանակներում: Ընկերությունը պատրաստ է նաև համագործակցել արտադրական համաձայնագրի շրջանակներում՝ սպիտակ պիտակի արտադրության համար:



Հողի հետ աշխատանքների և հանքարդյունաբերության բնագավառներում օգտագործվող սարքավորումների մասեր արտադրող իսպանական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ ամբողջ աշխարհում

Իսպանական ընկերությունն արտադրում է հողի հետ աշխատանքների (գյուղատնտեսական սարքավորումների մասեր և հորատման գործիքներ) համար նախատեսված սարքավորումների, ինչպես նաև հանքարդյունաբերական սարքավորումների մասեր, որոնք լիովին համահունչ են աշխարհում հիմնական OEM-ների (Original Equipment Manufacturers) կողմից մշակված սարքավորումների և գործիքների հետ: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ ամբողջ աշխարհում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/39b0ce23-aff5-466e-9f4c-f8135c7ac15a>

Ծածկագիր. BOES20191113001

Մետաղի վերամշակման ոլորտում գործող լեհական ընկերությունն իր ծառայություններն է առաջարկում արտադրական համաձայնագրերի և ենթապայմանագրերի ներքո

Լեհաստանի Արևմտյան Պոմերանիայում գործող ՓՄՁ-ն, որը զբաղվում է մետաղների մշակմամբ (եռակցում, մետաղի թերթի կտրում, կտում, մեքենայացում, ներկում), արտադրական և ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո իր բազմազան ծառայություններն է առաջարկում արտասահմանյան գործընկերներին: Ընկերությունը ցանկանում է երկարաժամկետ կապեր հաստատել օտարերկրյա գործընկերների հետ՝ նոր շուկաներ դուրս գալու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/4a308ae0-9b43-4ba5-a865-864f844e11f4>

Ծածկագիր. BOPL20200918001

Գործարար համագործակցության հարցումներ

Ընկերությունը Հյուսիսային Իռլանդիայից փնտրում է պլաստմասե կեռ արտադրողներ

Ընկերությունը Հյուսիսային Իռլանդիայից (Միացյալ Թագավորություն) փնտրում է կարիչի համար նախատեսված պլաստիկից պատրաստված ասեղներ արտադրող ընկերություն: Արտադրանքը նախատեսված է օգտագործել ամրացնող ատրճանակի միջոցով՝ էլեկտրական մալուխները սեղմելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/a8d57b63-13fb-44d4-ae8d-f41d4f26be67>

Հունական ընկերությունը փնտրում է այլումինե դոնորի և պատուհանների հրդեհակայուն նյութերի մատակարարներ

Այլումինե պրոֆիլներ արտադրող ինտեգրված արդյունաբերական միավորը հունական խոշոր ընկերություն է, որը փնտրում է այլումինե դոնորի և պատուհանների հրդեհակայուն նյութերի մատակարարներ, ինչպիսիք են օրինակ բլոկների համար նախատեսված նյութերը, միջադիրները, աքսեսուարները, սարքավորումները և կրակից ընդարձակվող սուսինձները: Համագործակցությունը կլինի մատակարարման համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c144ab4c-9bde-4273-9cc9-1ce46da2f48b>

R&D



Eurostars. Որոնվում է ՓՄՁ համակարգող, որը փորձ ունի բժշկական սարքերի մշակման և առևտրայնացման ոլորտում

Շվեյցարիայի համալսարանը երկու ՓՄՁ-ների հետ միասին նախապատրաստում է Eurostars-ի մրցույթի առաջարկին: Նպատակը՝ աուտիզմի թերապիայի աջակցության համար բժշկական սարք ստեղծելն է: Սարքը լրացնելու է արդեն մշակված և լայնորեն ընդունված թերապիան: Այն ինտեգրելու է տարբեր սենսորներ և արհեստական ինտելեկտի տեխնոլոգիա: Կոնսորցիումը լրացնելու և հետազոտական համագործակցության համար փնտրվում է գիտահետազոտական ՓՄՁ, որը բժշկական սարքավորման մշակման, սենսորի մշակման և ինտեգրման և առևտրայնացման ոլորտում փորձառություն ունի:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/fd9370a6-d51d-4318-a3a2-e0f1ed89e93c>

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Մալթական ընկերությունը, փորձ ունենալով գաղափարների ստեղծման տեխնիկայի և ստեղծագործական մտածողության ոլորտում, նորարարական կրթական հայեցակարգ է առաջարկում ֆրանչայզի պայմանագրի շրջանակներում

Ընկերությունը հիմնականում մասնակցում է նորարարական հասարակության խթանմանն ու զարգացմանը՝ վերապատրաստման և արտադրանքի զարգացման ծառայությունների միջոցով: Այն ապահովում է ուսուցում՝ ստեղծագործական մտածողության, գաղափարի ստեղծման և նորարարության ոլորտում, որի հիմնադիրները դասընթացներ են անցկացրել հանրային, ֆինանսական ծառայությունների, S2S և կրթության ոլորտներում: Ընկերությունը փնտրում է արտոնյալ շահառուներ իր վերջին արտադրանքի համար, որը ոգեշնչում է երեխաներին և երիտասարդներին՝ գյուտի հանդեպ ձգտում առաջացնելով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/53c92117-08e1-42e9-a465-07b3c60c006a>

Ծածկագիր. BOMT20201021001

Մալթայում գործող թվային կրթությամբ զբաղվող ՓՄՁ-ն տարածման ծառայությունների մատուցման առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո փնտրում է գործընկերներ/ հաճախորդներ

Մալթայի տեխնոլոգիական ընկերությունը, որը հետաքրքրված է, մասնավորապես, էլեկտրոնային ուսուցման և կրթության ոլորտում, մշակել է մի քանի առցանց դասընթացների նյութեր, որոնք նախատեսված են տարբեր տարիքի հանդիսատեսի համար՝ սկսած մանկավարժներից մինչև ուսանողներ, գործարարներ, մասնագետներ, արվեստագետներ և սոցիալապես անապահով անձինք: Ընկերությունը փնտրում է թվային նյութերի կրթական հրատարակիչների, որոնք կցանկանային տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո վերափոխել իրենց դասընթացները:

Լեհական ՓՄՁ-ն առաջարկում է ծառայություններ առողջապահության ոլորտի համար, ինչպիսիք են՝ ճշգրիտ բժշկության, գենետիկական ախտորոշման և սպառողների գենոմիկայի ծրագրային լուծումները, և փնտրում է ենթապայմանագրային համաձայնագրեր

Կրակովում հիմնված դինամիկ աճող, առաջնակարգ լեհական կենսաբժշկական ընկերությունը մասնագիտացած է գենոմիկայի և բիոինֆորմատիկայի ոլորտներում: Ընկերությունը բժշկական դիագնոստիկայի և գիտական հետազոտությունների համար տրամադրում է բարձր թողունակությամբ ԴՆԹ-ի հաջորդականացման (NGS - Next Generation Sequency) համապարփակ լուծումներ: Ընկերությունը համագործակցություն է փնտրում լաբորատորիաների, դեղագործական ընկերությունների և կլինիկաների հետ՝ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

Գործարար համագործակցության հարցումներ

Ռումինական SS ընկերությունը, որը բժշկական պատկերապատման և հեռառադիոլոգիայի համար ծրագրային լուծումների արտադրող է, ծառայությունների համաձայնագրի ներքո մասնագիտական աջակցություն է փնտրում CE- մակնշում ստանալու համար:

Ռումինական փոքր ընկերությունը, որը մասնագիտացած է բժշկական պատկերապատման և հեռառադիոլոգիայի ծրագրային լուծումների ոլորտում, ցանկանում է ապացուցել իր համապատասխանությունը Բժշկական սարքերի կանոնակարգին (MDR) և ստանալ CE-մակնշում: Փնտրվող գործընկերը պետք է կարողանա աջակցել ռումինական ընկերությանը պատրաստել տեխնիկական և այլ փաստաթղթեր՝ բժշկական ծրագրակազմի համար նախատեսված CE-II դասի II բ-ն ստանալու համար: Համագործակցությունը կլինի ցանկացած ՁԵՅ-անդամ երկրի ընկերության հետ՝ ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո:



Գործարար համագործակցության առաջարկներ

Բնական օճառի հիմքով ձեռագործ կոսմետիկա արտադրող ռումինական ընկերությունը տարածման համաձայնագրերի ներքո փնտրում է միջազգային գործընկերներ

Բնական օճառի հիմքով ձեռագործ կոսմետիկայի ռումինական արտադրողն առաջարկում է մեծահասակների և երեխաների համար նախատեսված դեմքի և մարմնի խնամքի միջոցներ: Ընկերությունը փնտրում է միջազգային բիզնես գործընկերներ՝ տարածման համաձայնագրի ներքո իր արտադրանքը տարածելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/8b58cf67-8e37-4f93-8bae-30db17dbc167>

Ծածկագիր. BORO20201021002



Բնական կոսմետիկա արտադրող հունական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Այս ընկերությունը սկսնակ ընկերություն է, որն արտադրում է բնական կոսմետիկա՝ հունական բնության խոտաբույսերի կիրառմամբ: Այն տեղակայված է Հունաստանի հյուսիսում և փնտրում է դիստրիբյուտորներ կամ առևտրային գործակալներ, առևտրային միջնորդներ ողջ Եվրոպայում՝ տարածման ծառայությունների կամ առևտրային ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/1de382b4-be0c-4fb0-92b5-4a0470b33443>

Ծածկագիր. BOGR20201103001



Լեհական ընկերությունը փնտրում է գործընկերներ

Լեհական ընտանեկան ՓՄՁ-ն մասնագիտացած է դեմքի, մարմնի և մազերի խնամքի բարձրորակ կոսմետիկայի արտադրության ոլորտում և փնտրում է նոր գործընկերներ: Հետևելով աշխարհի վերջին տենդենցներին և ակտիվ բաղադրիչների վերաբերյալ մանրակրկիտ ուսումնասիրություններ կատարելով՝ ընկերությունը մշակել է կոսմետիկայի հոսքագծեր, որոնք պարունակում են բնության հարստությունը: Ընկերությունը մատուցում է ծառայությունների լայն տեսականի՝ ներառյալ փաթեթավորումը և մակնշումը: Համագործակցությունը կլինի արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/a57db1a2-22da-47e7-9502-9b9de947c8bb>

Ծածկագիր. BOPL20191105001

Առողջապահություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Չինական կլինիկական IVD արտադրանք արտադրողը փնտրում է եվրոպական գործակալներ և դիստրիբյուտորներ՝ գործարար համագործակցության համար

Չինական ընկերությունը պրոֆեսիոնալ ընկերություն է, որը կենտրոնացած է կլինիկական in vitro ախտորոշիչ սարքի (IVD) արտադրանքի հետազոտման և արտադրության վրա: Այն կարող է սրամադրել COVID-19 հայտնաբերման լուծումների ամբողջ փաթեթը և ձգտում է համագործակցել բիզնես գործընկերության համաձայնագրի շրջանակներում պոլիմերազային շղթայական ռեակցիայի (PCR) հետ կապված պարագաների համար (ներառյալ ռեակտիվներ, գործիքներ և այլ սպառման նյութեր) եվրոպական գործակալների և դիստրիբյուտորների հետ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/78739a70-be12-4fd1-b542-9fd86ef2c3be>

Ծածկագիր. BOCN20201023001

COVID-19 իտալական ընկերությունը, որը մասնագիտացած է բժշկական սարքերի արտադրության մեջ, թողարկել է կիսակոշտ դեմքի նոր և նորարարական բժշկական դիմակ՝ մեկանգամյա օգտագործման փոխարինող ֆիլտրերով և փնտրում է դիստրիբյուտորներ:

Բժշկական սարքերի իտալական արտադրողը մշակել և առաջարկում է նոր և նորարարական բժշկական կիսակոշտ դիմակ՝ մեկանգամյա օգտագործման փոխարինող ֆիլտրերով, սերտիֆիկացված որպես բժշկական սարքի CE կարգի I տիպի IIR: Ընկերությունն այժմ փնտրում է դիստրիբյուտորներ արտերկրում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/19a5b634-1542-45b2-9812-5866cee90ee2>

Ծածկագիր. BOIT20201016001



Ֆիննական ՓՄՁ-ն առաջարկում է իրեն որպես ենթակապալառու ֆարմակոգենետիկ թեստերի մեկնաբանման և հաշվետվությունների համար, ինչպես նաև փնտրում է դիստրիբյուտորներ թեստային հավաքածուների համար

Ֆիննական ՓՄՁ-ն փնտրում է համալսարանական և մասնավոր կլինիկական լաբորատորիաներ դրանց սպասարկելու համար ենթապայմանագրի ներքո՝ թեստի արդյունքների վերաբերյալ դեղագործական մեկնաբանության համար՝ օգնելու կլինիկաներին, լաբորատորիաներին և սպառողներին՝ հասկանալ և օգտվել բարդ տվյալներից: Ընկերությունը փնտրում է նաև կորպորատիվ գործընկերներ, դեղատներ և առողջապահական խանութների ցանցեր՝ նրանց առաջարկելով իր թեստային հավաքածուները: Օգուտը կլինի անհատականացված խնամքի և դեղորայքի առավել լավ անվտանգությունն ու արդյունավետությունը:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/b23ea5c7-a2c0-41f3-8c54-ec7d8b1fdddd>

Ծածկագիր. BOFI20201012001

Գործարար համագործակցության հարցումներ

Ուկրաինական բժշկական ոլորտի ընկերությունը գործընկեր է փնտրում, որն ի վիճակի կլինի օգնել աութօրսինգի համաձայնագրի ներքո ISO որակի սերտիֆիկատի ISO 13485: 2016 երկարացումը ստանալու հարցում:

Կհետո գտնվող ուկրաինական արտադրողը փնտրում է ընկերություն, որը աութօրսինգի համաձայնագրի ներքո կօգնի երկարացնել ISO 13485 / CE սերտիֆիկատի ժամկետը բժշկական սարքերի համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/dba47777-728c-4925-b19a-8d437b286c36>

Ծածկագիր. BRUA20201005001



Գործարար համագործակցության առաջարկներ

Բնական ռեսուրսների և սննդամթերքի ռուսաստանյան մեծածախ վաճառողը փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ:

Սվերդլովսկի շրջանից մի ռուսական ընկերություն մասնագիտացած է սղոցված փայտանյութի, կոկոսի, շաքարի, հացահատիկային մշակաբույսերի և ծաղիկների արտադրության և վաճառքի ոլորտում: Այն գործընկերներ է փնտրում արտերկրում՝ տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալությունների համաձայնագրերի շրջանակներում համագործակցություն հաստատելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ebc98d9e-fe27-486e-80eb-7b305577d142>

Ծածկագիր. BORU20201030002

Արդյունավետ ախտահանման համար դյուրակիր էլեկտրաստատիկ հեղուկացիրներ արտադրողը Միացյալ Թագավորությունից փնտրում է գործընկերներ՝ տարածման համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, փնտրում է գործընկերներ տարբեր ոլորտներում՝ իր դյուրակիր պակաս հպումով էլեկտրաստատիկ ախտահանող հեղուկացիրային համակարգերի համար: Ապրանքը ուղղված է առևտրային և ինֆեկցիաների կանխարգելման շուկաներին և ներկայումս օգտագործվում է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են դպրոցներն ու մանկապարտեզները, զբոսաշրջային նավերը, հյուրանոցները, մարզադահլիճները, հիվանդանոցները և այլն: Ընկերությունը տարածման համաձայնագրի ներքո փնտրում է բիզնես գործընկերներ և մանրածախ առևտրով զբաղվող ընկերություններ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/1a667308-0260-497d-8a63-1236d231dded>

Ծածկագիր. BOUK20190528001



Տուրօպերատորը Կոստվոյից փնտրում է տուրիստական գործակալներ և տուրօպերատորներ առևտրային գործակալության համաձայնագրերի համար

Տուրիստական գործակալությունը տեղակայված է Պրիշտինայում: Ընկերությունն առաջարկում է զբոսաշրջության և միջոցառումների ծառայությունների լայն տեսականի Կոստվոյում, ներառյալ՝ արկածային շրջայցերը լեռներում, մշակույթի ուսումնասիրություն, խոհարարություն և այլն:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f1660a77-b1e5-4dd1-b5c2-1c75356744d2>

Ծածկագիր. BOXK20201029001

Չեխ գյուտարարը լիցենզիայի համաձայնագրի շրջանակներում առաջարկում է գոլորշիով աշխատող մեծ մոմենտով պտտվող շարժիչի նոր՝ արտոնագրված լուծում:

Չեխ գյուտարարը մշակել է գոլորշիով աշխատող պտտվող շարժիչի նոր տեսակ՝ պտտման ողջ տիրույթում բարձր մոմենտով: Ոչ մի վնասակար արտանետում, ոչ մի միկրո մասնիկ չի արտադրվում վերահսկվող այրման շնորհիվ: Շարժիչը նախատեսվում է որպես նոր էկոլոգիական շարժիչ ընտրված ոլորտներում: Գյուտարարը փնտրում է լիցենզիա ունեցող անձինք, որոնք նախատիպը կօգտագործեն հատուկ կիրառական ծրագրերում և վաճառք կապահովեն:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/5d8f92cf-9f39-4091-86ad-1e163ac0b6b8>

Ծածկագիր. BOCZ20201023001



Բազմաբաղադրիչ օբսիդային բարդ և կոմպոզիտային նյութերի ռուսական արտադրողը փնտրում

Է դիստրիբյուտորներ

Սվերդլովսկի շրջանի ռուսական հետազոտական և արտադրական ձեռնարկությունը մասնագիտացած է ջերմային էներգիայի ոլորտում ծածկույթների և կերամիկայի համար բարդ բազմաբաղադրիչ օքսիդի և կոմպոզիտային նյութերի և հատուկ ցիրկոնիումի օքսիդի արտադրության բնագավառում, Ընկերությունը փնտրում է գործընկերներ արտասահմանում՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/1a41fbbe-fa17-41a9-9f5d-47baf557db80>

Ծածկագիր. BORU20201028001

Ջրի էկոլոգիական մաքրման համար սարքավորումներ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրեր

Ստորին Սիլեզիայի տարածաշրջանում գործող լեհական փոքր ընկերությունը, որը մասնագիտացած է վերականգնվող էներգիայի խելացի մոդուլների արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ եվրոպական երկրներում՝ իր արտադրանքը միջազգային շուկայում տարածելու նպատակով: Ընկերությունը հետաքրքրված է տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրերով՝ երկարաժամկետ համագործակցության հաստատմամբ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/bef013c7-760d-41ec-878f-8989095c84cb>

Ծածկագիր. BOPL20201019002

Իտալական նորաստեղծ ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ՝ անվաբազկաթոռների համար նախատեսված իր նորարարական շարժիչային մոդուլի համար:

Իտալական ընկերությունը, որը մասնագիտացած է հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված օժանդակ միջոցների նախագծման և իրականացման մեջ, մշակել և արտոնագրել է զուգակցման նորարարական համակարգ, որը թույլ է տալիս էլեկտրական շարժիչը ամրացնել ձեռքի անվասայլակին: Ընկերությունը տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալության համաձայնագրի ներքո գործընկերներ է փնտրում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6b719e04-e8b9-4c8f-8586-cabea6d3b8c7>

Ծածկագիր. BOIT20191126001

Գործարար համագործակցության հարցումներ

Ֆիննական ընկերությունը փնտրում է ավագ վարորդների համար նախատեսված պարագաների մատակարարներ

Ֆիննական ընկերությունն ու վարորդական ակադեմիան տարածման ծառայությունների կամ մատակարարի համաձայնագրի ներքո փնտրում են ավագ վարորդների ավտոմեքենաների պարագաների միջազգային մատակարար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/e0e94b10-10c7-46f0-b836-83f956859190>

Ծածկագիր. BRFI20201110001




Խորվաթական ընկերությունը գործում է որպես հիգիենիկ ապրանքների դիստրիբյուտոր և առաջարկում է տարածման և առևտրի միջնորդավորված ծառայությունների համաձայնագիր

Խորվաթական շուկայում ավելի քան 25 տարի գործող ընկերությունը, որը գործում է որպես մեծածախ ընկերություն, հիմնականում տարածում է հիգիենայի պարագաներ և նման այլ ապրանքներ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների և առևտրի միջնորդավորված ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/26cdc040-19c1-447b-b854-9ba9ca200061>

Ծածկագիր. BRHR20200924001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Իմունային միջնորդությամբ բորբոքային հիվանդությունների բուժում

Գերմանական համալսարանն առաջարկում է նոր բաղադրիչ՝ իմունային միջնորդությամբ բորբոքային հիվանդությունների բուժումը բարելավելու համար: Այն հիմնված է հատուկ NMDAr (N-Methyl-D-Aspartat ընկալիչների) հակազոդող նյութի վրա, որը ընտրով կերպով կապվում է NR2B ենթաբաժնի հետ և ցույց է տալիս զգալի հակաբորբոքային ազդեցություն: Նոր NR2B ընտրովի միացությամբ բուժումը ցույց տվեց բազմակի սկլերոզի խիստ պակաս առաջընթաց in-vivo մկնիկի մոդելում: Համալսարանն առաջարկում է լիցենզային համաձայնագրեր բժշկական արդյունաբերությանը:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/cc06569f-547e-4c2c-bc84-298ebce7a01b>

Ծածկագիր. **TODE20201105001**

Հեշտ կիրառվող համակարգչային ծրագիր՝ նախատեսված մեծահասակների խնամակալների համար

Երիտասարդ ընկերությունը Միացյալ Թագավորությունից, հավելվածում փորձարկել է բազմաթիվ մոդուլներ, որոնք հեշտացնում են տարեց բնակչի, խնամողների և ընտանիքի միջև տեղեկատվության փոխանակումը: Ընկերությունը փնտրում է խնամքի տներ և խնամքի ցանցեր՝ տեխնիկական համագործակցության ներքո մոդուլները հետագայում փորձարկելու և իրենց իրավիճակին առավելագույնս համապատասխան լուծումներ ընդունելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/8efd483a-3b4d-456e-8860-77e3b63465e4>

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Կեղտաջրերի տիղմի՝ որպես պարարտանյութի վալորացում շրջանաձև տնտեսության շրջանակներում

Ջրի մաքրմանը նվիրված իսպանական ընկերությունը ցանկանում է կեղտաջրերի կայաններում առաջացած տիղմը վերածել գյուղատնտեսական պարարտանյութի: Անհրաժեշտ են մասնագետներ՝ այդ թափոնների տարբեր տեսակները, նախնական իրավիճակը ուսումնասիրելու և դրանց արտադրության հետ կապված խնդիրները հայտնաբերելու համար, ինչպես նաև դրանց կառավարումը և տեխնիկաները մշակելու նպատակով՝ հետազոտական կամ տեխնիկական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0a028afb-b647-4ec2-a37c-0371ae577ef4>

Ծածկագիր. TRES20201027001

Բաց ծակոտկեն, ծավալային կայուն, հրակայուն, թեթև տախտակ

Շվեյցարական ընկերությունը փնտրում է տախտակ արտադրող, կամ հետազոտող և մշակող գործընկեր, որն արտադրում կամ մշակում է բաց ծակոտկեն, օդաթափանց, հրակայուն, թեթև տախտակ: Տախտակի չափը մոտավոր 3,0 մ x 1,2 մ է: Ապրանքը կարող է վերամշակվել կամ առաքվել որպես արդեն գոյություն ունեցող տախտակի նյութ: Այն կօգտագործվի շինարարական արդյունաբերության մեջ: Ընկերությունը գործընկեր է փնտրում արտադրության կամ տեխնիկական համագործակցության համաձայնագրի ներքո, որը հնարավոր է ներառի նաև մշակումը:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/5b89ccde-be11-4c2e-9e49-244f28d9ee24>

Ծածկագիր. TRCH20190703001

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2020 թ.-ի դեկտեմբեր ամսվա ընթացքում կազակերպվող միջոցառումները:

Դեկտեմբեր

07/12/2020	<p>ECHINNOVATION 2020 (Virtual)</p> <p>Մինգապուր (Մինգապուր)</p> <p>Այս միջոցառումը միավորում է միջազգային տեխնոլոգիական մատակարարներին և ձեռնարկություններին՝ արագացնելու զարգացող տեխնոլոգիաների առևտրայնացումը, սերմերի արտոնագրման հնարավորությունները և բաց նորարարական համագործակցությունները խթանելու համար:</p> <p>http://www.techinnovation.com.sg/</p>
------------	--

ԱՎԱԳ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ _ SENIOR EXPERTEN SERVICE (SES)

SES ծրագրի առավելությունները

- Մասնագետների վերապատրաստում, ուսուցում, որակավորում
- Ծառայությունների մատուցման, արտադրական գործընացի բարելավում, օպտիմալացում

- Տեխնիկական, արտադրական, կազմակերպչական խնդիրների լուծում
- Երկար տարիների փորձ ունեցող մասնագետների միջնորդում
- Խորհրդատվություն տնտեսության ավելի քան 50 ճյուղերի համար
- Ուղարկված հարցմանը համապատասխան աջակցություն, խորհրդատվություն Ովքե՞ր կարող են օգտվել SES ծրագրից
- Փոքր ու միջին ձեռնարկությունները տնտեսության ամենատարբեր ոլորտներից
- Հանրային և բժշկական հիմնարկները
- Կրթական ձեռնարկությունները
- Հիմնադրամները

SES ծրագրի ֆինանսավորումը

Պատվիրատուն պարտավորվում է ստանձնել Հայաստանում նախատեսվող ծախսերը՝ կացարան, օրական 3 անգամ սնունդ, օրական 5 եվրոյին համարժեք ՀՀ դրամ որպես գրպանի փող:

Գերմանական կողմն իր վրա է վերցնում ինքնաթիռի տոմսի և ապահովագրության ծախսերը:

Հետաքրքրե՞ց Ձեզ: Հարցերի դեպքում կարող եք դիմել Հայաստանում Ավագ փորձագետների ծառայության ներկայացուցիչ Մարիամ Մաժինյանին:

Հեռ.՝ +374 95 12 84 87

E mariam.mazhinyan@armenien.ahk.de

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

Նշում: *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝*

համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: